թագուհեացն ազօթասէր և աղքատասէր. և հանապազ սպասաւորէր ս՟ք ուխտեացն, որք էին ի ս՟ք կ՟թուղիկէն, յա՟ծազարդ և գերապայծառ ս՟ք խաչն յաղթամարայ. զի զնա ընտրեաց ա՟ծ և հաճեցաւ բնակիլ ի նմա, և եդ ի պահեստի[1] զգանձս ա՟ծայինս զաթոռ մերոյ ս՟ք[2] լուսաւորչին զպարթևի գրիգորի. Եւ[3] զնշան տ՟րունական[4] խաչին. յորոյ վերայ էր կաթուած արեան կենարար

ին

42. ին ընդելուզեալ ոսկով և մարգարտով,[5] զոր[6] եա տ՟ր ի ձեռն ս՟ք և երջանիկ հայրապետին արհի եպիսկոպոսին տէր դաւիթի։ Որ դեռ ևս կոչի ապարանից և ս՟ք նշան անպատի. Զի էր տ՟ր դաւիթ ի յազգէն գագկայ և էին յազգէն[7] պատուկուրապաղին և էին սոքա ազգք ս՟ք և ընդրե՟լք ի տ՟նէ, զոր յառաջագոյն ընդրե՟լ հոգւոյն ս՟բյ տեսուչ[8] և վերակացու լինիլ տանն վասպուրարակի.[9] զմեծ իշխ՟նն զանուանեալն խեդենիկ։ զազգակից արքային սենեքէրիմայ։ և թագաւորաց ցեղիցն արծրունեաց. նա ծնանի զթոռնիկ իշխան։ այր հզօր. և պատերազմող. և քաջ. ի գործ արուե՟. և զեղբարսն իւր. զս՟ք և զամենապով զբարի և զերջանիկ[10] զհովիւն քաջ

---

1 Զ. ի պահետի

2 Զ. սբ տղմ.

3 Զ. ։ Եւ, Ե-ը կրմ.

4 Զ. տունական

5 Զ. մարգաով

6 զոր-ից յետոյ տէր ա՟ծ ջնջ. նշ.

7 Զ. յազգեն-ից յետոյ պր ջնջ. նշ.

8 Զ. տետուչ

9 այստեղից մինչև զեղբարսն իւր. կէտադրութիւնը թողնում ենք անփոփոխ՝ նախադասութեանց մասերի անորոշութեան պատճառով.

10 Զ. զ տղմ.